Դառնալ կատարյալ Հիսուս Քրիստոսում

Կարդացեք սուրբ գրությունների հետևյալ հղումները: Փնտրեք արտահայտություններ, որոնք մեծացնում են ձեր վստահությունը նրանում, որ Փրկիչը կարող է օգնել մեզ հաղթահարել մեր անկատարությունները և ավելի նմանվել Իրեն: Ձեր օրագրում կամ աշխատաթերթի հետևի մասում գրեք այն, ինչ գտաք:

Վարդապետություն և Ուխտեր 76.40–42

Եթեր 12.27

Մորոնի 10.32–33

Կարդացեք հետևյալ ուղերձները: Փնտրեք, թե ինչ կարող ենք անել, որպեսզի հաղթահարենք կատարելապաշտական մտածողությունը և կենտրոնանանք Հիսուս Քրիստոսի միջոցով ավելի լավը դառնալու վրա: Կարող եք նշել այն արտահայտությունները, որոնք կարևոր են ձեզ համար:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆն ուսուցանել է, թե ինչ է Տերը ակնկալում և ինչ չի ակնկալում մեզանից.

Աստծուն պետք չեն մարդիկ, որոնք անթերի են: Նա փնտրում է մարդկանց, որոնք իրենց «սիրտն ու պատրաստակամ միտքը» կմատուցեն [Վարդապետություն և Ուխտեր 64.34], և որոնց Նա կդարձնի «կատարյալ Քրիստոսում» [Մորոնի 10.32–33]: (Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Հինգ ուղերձ, որ Աստծո բոլոր զավակները պետք է լսեն» [Բրիգամ Յանգ համալսարանի հավաք, օգոստոսի 17, 2021], 3, speeches.byu.edu)

Նախագահ Ռասել Մ. Նելսոնը բացատրել է, թե ինչ կարող ենք մենք անել, երբ տեսնում ենք մեր անկատարությունը.



Եկեք անենք հնարավոր ամեն բան և ամեն օր փորձենք կատարելագործվել: Երբ ի հայտ են գալիս մեր անկատարությունները, մենք կարող ենք փորձել շտկել դրանք: Մենք կարող ենք ավելի ներողամիտ լինել մեր և մեր սիրելի մարդկանց թերությունների հանդեպ: (Ռասսել Մ. Նելսոն, «Perfection Pending», *Ensign*, նոյեմբեր 1995, 88)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_576-1